

Բարձրագույն աշխարհ

Բացառիկ

ՄԱՅՐ ԱՌՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՍԵՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿԵԱԲԱԹԱԹԵՐՈ

Եվհրիզում է Պարեգին Բ Ամենայն հայոց հայրապետի գահակալության 15-ամյակին

ՎԱՆԵՆՔ ԹԱՅՆ ՈՒ ՉՈՐԸ ՄԻՎԱԽՆ ԱՅՐԵԼՈՒ ՏԽՈՒՐ ԾՈՐՉԱՌՈՒԹՅՈՒՆԸ



«Ժամանակը խառնակ էր. թացն ու չորը միասին կրակի բերան էին տալիս, ամեն ինչ կորչում էր ծովն ու դումանի մեջ, ու դեռ տրտնջում էին, թե արեան էլ արեւ չի՝ ո՛չ լույս է տալիս, ո՛չ տաքություն, մի աղոթող էլ չկա՝ ո՛չ տերտեր, ո՛չ էլ՝ սնոթ: Չկար մեկը, որ ընդամենն ասեր. «Ա՛յ ժողովուրդ, չորը չորի հետ վառեք, իսկ թացը թողեք գալիք տարվան, մինչեւ չորանա»: Այս խոսքերի հեղինակը ես չեմ, եւ ոչ էլ՝ որեւէ գրող կամ անվանի մեկը. լսել եմ մի իմաստուն ու ծեր գյուղացուց՝ շատ տարիներ առաջ: Սա հիշեցի, քանզի մենք այսօր նույն թացն ու չորն ենք միասին այրում, երբ մանավանդ խոսքը վերաբերում է մեր Եկեղեցուն կամ նրա գահակալին:

Ժամանակները կարող են խառնակ լինել, ժամանակները կարող են անբարենպաստ լինել, բայց ազնիվ ու հեռատես մարդու գործը թացն ու չորն իրարից առանձնացնելն է, արածի ու չարածի միջեւ սահման դնելը, արածի համար դրվատանքի խոսքեր ասելը, իսկ չարածի համար՝ նոր միայն փնտվելը: Բայց երբ ահռելի արածին անգամ մի փոքր չարածն են խառնում, միեւնույն է, ծխում է, ու ծուխը, ցավը, արածին էլ է ծխակալով անում: Սա չարակամ մտայնություն է, որի թունապատ պտուղներից օգտվում են բոլորը, նաեւ հենց ինքը՝ չարակամը:

Հայոց պատմությունն ուսումնասիրողներին քաջ հայտնի է, որ մեր ժողովրդի խաղաղ ապրելու,


ստեղծելու, արարելու, բարգավաճելու տարիներն ամենեին էլ կշեռքի ծանր նժարին դրվելիք չեն, թեպետ մեր ստեղծած արժեքները, մարդկությանը բերած մշակութային, գիտական, հոգեւոր մեր ժառանգությունը, ինչը, ի դեպ, բացառապես Հայոց Եկեղեցու ժառանգությունն է, համաշխարհային առաջադիմական մտքի ոչ պակաս արժեքավոր ձեռքբերումներից են:

Սակայն, ցավ ի սիրտ, այսօր մեր՝ հայերիս մեջ քիչ չեն մարդիկ, ովքեր մտածում են, թե մեր խելք-ճուլքան մեղքերի մեղքը քրիստոնեության ընդունումն էր՝ մոռանալով, որ ծովից ծով Հայաստանի «բարձրակի լեզենդը» քրիստոնեությանը չավարտվեց, մոռանալով, որ Բյուզանդիայի եւ Պարսկաստանի միջեւ բզկակներով Հայաստանը հաչի թեւերով չէր բաժանվել:

Ինչեւէ, քրիստոնեությունն ընդունելուց հետո՝ 17 դար անընդմեջ, հայոց հողի վրա կառուցվել են ոչ միայն սքանչելի վանքեր, Եկեղեցիներ, մատուռներ, այլեւ ստեղծվել են անկրկնելի ու բազմաբնույթ ձեռագրեր, որոնք ծաղկվել ու նկարագորակվել են մեզ հայտնի ու անհայտ նկարիչ-վանականների մատերով, ձեռագրվել են մեր կյանքի տարբեր ոլորտներին վերաբերող անհաշիվ գրքեր, ուսումնասիրություններ, երկեր, հորինվել գոհար մեղեդիներ, շարականներ, տաղեր: Մեր լուսանուն հոգեւոր հայրերի բանաստեղծական քանջարի ավանդույթների շնորհիվ դեռեւս տասներորդ դարում հայ բանաստեղծական արվեստը հասել էր նարեկյան տիեզերաշունչ մի բարձունքի, որի գագաթից այսօր համաշխարհային պոեզիայի մեծերն անգամ այլ լույսի տակ են դիտվում: Եվ այս ամենը՝ այս գիտական, հոգեւոր ու մշակութային մեր ողջ ժառանգությունը հիմնականում վանական մտքի արգասիք է, որն իր լայնախոհությամբ ու բարձրարժեքությամբ պատիվ կրեեր ուզած ժողովրդի, պետականությունն ունեցող ուզած ժողովրդի: Իսկ նրանք, ովքեր այսօր խոսում են հայկական ինքնության, ազգային գա-

ղափարախոսության մասին, վատահ են, ազնիվ լինելու դեպքում կնշեն, որ դրանց անգերազանցելի «հիմնադիրները» մեր Եկեղեցու հայրերն են եղել՝ սկսած Մեսրոպ Մաշտոցից, Սահակ Պարթևից, քերթողահայր Խորենացուց մինչեւ Նարեկացի ու Կոմիտաս: Ընդամենը հինգ դասեր է պետք առնել, ուրիշի կասկածելի «քրոնտակից» քաղելու փոխարեն՝ մերը, մեզապատկանը սնել ու ածեցնել, ինչպես դա արել են մեր լուսանուն հայրերը՝ Հայ Առաքելական Եկեղեցու հոգեւորականները:

Հայոց Եկեղեցին, ի պատիվ նրա փառավոր գահակալների, մշտապես ապրել է հայրենիքը, հողն ու ժողովրդին ապրեցնելու մտահոգությամբ: Այս մտահոգության մասին են վկայում Եկեղեցու՝ թե՛ գրերի գյուտի ու դպրության, թե՛ գիտության ու մշակույթի խելորների բարձրացումն ու սքանչելի լուծումները, թե՛ ազգային ազատագրական պայքարներին նրա անսխալական մասնակցությունն ու դրանց գլխավորումը, թե՛ սոցիալական ոլորտին առնչվող հարցերը, ինչպես օրինակ՝ անկեղանցների ու արքատագ խնամոցների բացումը եւ այլն:



Հայոց Եկեղեցին, ինչպես դարեր շարունակ, այնպես էլ մեր ժամանակներում, չի կորցրել իր խոհեմությունն ու իմաստությունը եւ ի հեճուկս չարախոսությունների, գրպարտությունների ու վարպահությունների՝ եղել ու մնում է աշխարհով մեկ սփռված իր ժողովրդի ոչ միայն հոգեւոր, այլեւ ազգային խոշորագույն կառույցը, պետականաշխարհային ամուր հենասյուներից մեկը:

Շարունակությունը՝ էջ 2



ՎԱՆԵՆՔ ԹԱՅՆ ՈՒ ՉՈՐԸ ՄԻՎԱՍԻՆ ԱՅՐԵԼՈՒ ՏԵՈՒԻ ԹՈՐՉԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Սկզբը՝ էջ 1

Այն վերստին կոչված է իր բուն առաքելությանը, վերստին իր ծառայական կերպի մեջ է, որ-բան էլ անխոհեմ ու պետական մտածողությունից հեռու անձերն ու լրատվամիջոցները փորձեն նսեմացնել նրա գործունեությունը, փորձեն «թացն ու չորը միասին վառել, ծուխ ու դրաման անել»:

Դարեր առաջ կորցրինք մեր պետականությունը, մեզ կից առաջ ու մեջ պես նաեւ հին այլ ժողովուրդներ կորցրին իրենց պետականությունը: Արդյոք նրանցից քանիսի՞ն գիտեց, որ շարունակ օտարի լծի ծանրության տակ հեծելով՝ կարողացան պահպանել իրենց գիրն ու գրականությունը, հոգեւոր, մշակութային ժառանգությունը, ազգային իրենց ինքնատիպ ու կուռ նկարագիրը, մի խոսքով՝ իրենց ինքնությունը, որ հետո կարողանային վերագտնել նաեւ իրենց պետականությունը:

Եվ ահա մենք գտանք մեր պետականությունը, գտանք շնորհիվ այն «ժառանգության», որ կոչվում է գիտակցված ու մաքառող հիշողություն, որ կոչվում է հայի տեսակով ապրելու անկտրում կամք ու տեսլական: Իսկ այդ կամքը մեզանում կոփվել էր տիրահաստատ, բայց առավելապես մերտապաշունչ մեր եկեղեցու կամարների տակ:

Չայրենասիրությունն ու աստվածասիրությունը վերամբարձ խոսքերի փողոհարում չեն. դրանք միմիայն գործերով են հաստատվում: «Թող քո ձախ ձեռքը չիմանա, թե ինչ է անում քո աչքը» ավետարանական խորհրդուրդ այս պատգամը Չայրջ Չայրապետների, այդ թվում եւ Գարեգին Բ Վաթոռիկոսի պարագայում ինչ-որ տեղ հավասարազոր է ներսից ջուրձն շապիկ, իսկ

կի պարզ միտումնավորություն է, իսկ ավելի ճիշտ՝ քաղաքական ու հանրային որոշ ներդրացած ուժերի որդեգրումներ:

Չարկ է հիշել, որ Նորին Սրբության՝ Արարատյան թեմում պաշտոնավարության շրջանը համընկավ մեր ժողովրդի ամենաճանր ու դժվարին տարիների հետ, եւ այդ դժվարությունները ոչ թե ընկճեցին, այլ մղեցին նրան հայրենասպաստ ու ազգաշեն գործերի:

Բոլորս ենք հիշում, թե մեր անկախության առաջին տարիների ինչ էր կատարվում Չայաստանում: Խորհրդային Միության փլուզումից հետո երկրում փլուզվել էր նաեւ ամեն ինչ՝ գործարաններն ու ֆաբրիկաները, գիտական հաստատություններն ու մշակութային օջախները, բուհերն ու դպրոցներն էլ կային ու չկային, մութ էր, ցուրտ ու սով: Եվ այդ ամենից առաջ եւ այդ ամենի կենտրոնում կար նաեւ կարգախոս պատերազմը: Մի կողմ



հացի հետեւից ընկած ծնողներն ասես մոռացել էին իրենց երեխաներին, որոնք դպրոց հաճախելու փոխարեն փորձում էին «ստուղիկների» առջել իրենց հաս-



տույցներից էին նաեւ երեւակյան պիտներպատները:

Եվ ահա 1993-ին դեռես Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գարեգին արք. Ներսիսյանը (իմա՝ Վեհափառ Չայրապետը) տեր կանգնեց նման երեք շինու-

թյունների՝ սոցիալական ծառայության խնդիրը մշտապես եղել է Վեհափառ Չայրապետի հրատապ ու անհրաժեշտ ծրագրերի համակարգապատկերում:

Եվ ահա 2013 թվականի վերջերի Չայրջ Չայրապետը Մայր Աթոռում հիմնեց նաեւ Սոցիալական ծառայությունների բաժինը, որի իրագործումը, հասկանալի պատճառներով, թեւեւ հեշտին չէր, բայց ուներ ռզեւորի ու պարտավորեցնող շեշտվածություն: Այսօր ծառայությունը, որ ընդամենը մի քանի ամիս է, ինչ գործերը գործառնում է, եւ որոշ գործառնություններ դեռես նախապատրաստական, սկզբնական փուլում են, արդեն հասցրել է անշրջելի դարձնել մի շարք ծրագրեր: Այս կարելու մտահղացումը կյանքի կոչելու գործում առաջինն աջակցություն բերեց «ԷԿԼՕՏ» միջազգային հայաստանյան կազմակերպությունը: Ծառայության հիմնական միջոցներն այսօր գոյանում են անհատ բարերարների, տեղի եւ արտերկրի կազմակերպությունների նվիրատվություններից:

Ծառայության բուն ուղեծրով գտնվող Երեւանի «Նազգաշյան» եւ Էջմիածնի «Քյուրքչյան» մանկատների, Էջմիածնի եւ Երեւանի բարեգործական ճաշարանների, «Գարեգին Բ» տնաշինական ծրագրի կողքին՝ այն նաեւ հավակնում է իր կարելու դերակա-



դրսից ոսկեկար ծիրանի հագնելու: Եթե մի պահ փորձեց բացել մեր հոգու՝ արդարության ու ճշմարտության ռոները, ապա անուրանալի կերպով, աներկմտորեն կոտեսնեց առեղի այն աշխատանքը, ճնայած որոշ թերությունների, թերացումների ու սխալների գոյության (սխալներ թույլ չեն տալիս միայն նրանք, ովքեր ոչինչ չեն անում), որ մեր պատմության ոչ մի ժամանակահատվածում Չայրջ եկեղեցում չի կատարվել, որքան Գարեգին Բ Վեհափառի գահակալության այս 15 տարվա ընթացքում: Դրանք այնքան շատ են եւ այնքան խոսուն, որ չտեսնելն ուղղա-

տատնել: Զմոռանանք նաեւ, որ այդ երեխաներից շատերի հայրերն էլ «գազարված» էին մեր սահմաններն ու Արցախը պաշտպանելու սրբազան գործով: «**Երեխաները մեր ապագան են**» ասախատանքը, ճնայած որոշ թերությունների, թերացումների ու սխալների գոյության (սխալներ թույլ չեն տալիս միայն նրանք, ովքեր ոչինչ չեն անում), որ մեր պատմության ոչ մի ժամանակահատվածում Չայրջ եկեղեցում չի կատարվել, որքան Գարեգին Բ Վեհափառի գահակալության այս 15 տարվա ընթացքում: Դրանք այնքան շատ են եւ այնքան խոսուն, որ չտեսնելն ուղղա-

տատնել: Զմոռանանք նաեւ, որ այդ երեխաներից շատերի հայրերն էլ «գազարված» էին մեր սահմաններն ու Արցախը պաշտպանելու սրբազան գործով: «**Երեխաները մեր ապագան են**» ասախատանքը, ճնայած որոշ թերությունների, թերացումների ու սխալների գոյության (սխալներ թույլ չեն տալիս միայն նրանք, ովքեր ոչինչ չեն անում), որ մեր պատմության ոչ մի ժամանակահատվածում Չայրջ եկեղեցում չի կատարվել, որքան Գարեգին Բ Վեհափառի գահակալության այս 15 տարվա ընթացքում: Դրանք այնքան շատ են եւ այնքան խոսուն, որ չտեսնելն ուղղա-



տարությունն ապահովել մեր ժողովրդի կյանքի խնդրառու բոլոր հասցեներում՝ հիվանդներն ու հաշմանդամներ, ազատամարտիկներն ու բազմադարձ կամ պարզապես սոցիալական անապահով ընտանիքներ, անվճարունակ ուսանողներ, տեղահանվածներն ու փախստականներ՝ սիրահայեր, քեսաբախայեր, իրաքահայեր, սահմանամերձ բնակավայրերի բնակիչներ, բայց

նախ եւ առաջ՝ ամենից ավելի անապահովներ:

Նշենք միայն, որ այս մի քանի ամսվա ընթացքում Մայր Աթոռն զգալի քանակությամբ ԱՄՆ դուրս է փոխանցել Սիրիայում ապրող մեր հայորդիներին, դրամական եւ այլ կարգի (սնունդ, դեղորայք, հագուստ, կոշիկներ, գրեթե անակա պարագաներ) նկատելի օգնություն ցուցաբերել հայրենիքում ապրողներին, որոնք մեծ մասն ազատամարտիկների ընտանիքներ են, բազմադարձ ընտանիքներ, սիրահայեր, իրաքահայեր, քեսաբախայեր, հիվանդներ:

Սոցիալական ծառայության սկզբունքային, հիմնարար գործառնություններից է յուրաքանչյուր օր մեկ ընտանիքի օգնելը:

Չարմանալի ժողովուրդ ենք. օտարներին ներկայանալիս հպարտորեն նշում ենք, որ առաջինը քրիստոնեությունն ընդունած ժողովուրդն ենք, քրիստոնեական մշակույթի ու քաղաքակրթության հիմնադիրը, ցուցաբերում ենք նրանց մեր պատմամշակութային ժառանգությունը՝ վանքերն ու եկեղեցիները, խաչքարերն ու կիրառական արվեստի միջնադարյան նմուշները, մեր գրչարվեստն ու մանրանկարչությունը եւ անվերջ դժգոհում հարածող եկեղեցաշինությունից՝ մեջտեղ հանելով ժողովրդի սոցիալական կիճակը: Իսկ ո՞վ կարող է հիմնավոր փաստարկներ բերել, որ Չարկյանն ու Սանահինը, Տաթևի վանքն ու Նորավանքը, Չառիճավանքն ու Սաղմոսավանքը, Գեղարդն ու Ղոբիսիմեն կառուցվել են մեր երկրի սոցիալապես ծաղկուն պայմաններում. եթե սոցիալականի հետ կապելու լինեիք, այսօր, աշխարհին մեր թշվառությունը ցուցաբերելուց զատ, ուրիշ ոչինչ տալ չէիք կարող: Պետականությունը, հողը, անգամ լեզուն կորցրած շատ ժողովուրդներ մարդկության հիշողության մեջ պահպանվել են իրենց թուրած մշակութային ժառանգությամբ. թվարկելու հարկ չկա:

Ուստի, ի հեճուկա նման ճղճմ մտայնության, Նորին Սրբության՝ Մայր Աթոռում գահակալության տարիներին անսախառնեզ զարկ ստացավ առավելապես եկեղեցաշինությունը՝ հարակից եւ օժանդակ կառույցները ու համայնքներում առկա եկեղեցիների խորզակալան աշխատանքներով:

ԽՈՍՔ ԳՆԱԶԱՏԱՆՔԻ ՈՒ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԻ

Լրացավ Ամենայն Հայոց սրբազանագույն Հայրապետի գահակալման 15-րդ տարեդարձը: Այսօր մենք ակնածամբով ու սիրով շնորհավորում ենք Վեհափառին ու մարդու մրան արելատ երկար տարիներ՝ ի պայծառություն մեր Սբ Եկեղեցու ու ի վայելումն մեր քրիստոսապաշտ ժողովրդի: Արդեն 15 տարի է, ինչ Վեհափառը նախանձախնդրորեն ու նվիրումով, պատշաճորեն ու արգասավոր կերպով կատարում է իր ուսերին ծանրացած պատկանելի ու աներեւակայելի դժվարին պարտականությունները, իր բուն առաքելությունը՝ որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս: Փառք եւ գոհություն Աստուծուն: Մեր Եկեղեցու դարավոր պատմության մեջ Վեհափառն այն բացառիկ հայրապետներից է, ով առանձնանում է իր բազմարդյուն գործունեությանը: Եթե փորձենք ու համարձակվենք մեկ բառով բնութագրել Վեհափառին, ապա որպես պատվատիրոջ՝ կնախընտրեմք «Շինարարը»՝ բառիս ամենալայն իմաստով. հենց այսպես էին հորջորջում անցյալի մեր բազմաբերուն հայրապետներին, որոնք ստանալով էին կատարում, դպրոցներ հիմնում՝ ի վառա Աստուծո ու ի մխիթարություն ժողովրդի: Իսկ բանի՝ բանի՝ տաճար, եկեղեցի, հուշարձան, դպրոց, վարչական ու տնտեսական շինություն են կառուցվել Գարեգին Բ-ի հոգևորությամբ: Իսկայես, տեղին կլինեք գրանցել վերոհիշյալ մակամունքը: Այսօր դժվար է թվարկել, թե այս 15 տարվա ընթացքում որքան գիրք է հրատարակվել, ինչպես է ծաղկել ու բարգավաճել տպագրական գործը: Վեհափառի նախաձեռնությամբ է, որ Հայ Եկեղեցու պատմությունը դարձրանա դարձավ պարտադիր առարկա, ինչը խիստ կարևորություն ունի մատաղ սերնդի հոգեւոր ու հայապաշտ դաստիարակության համար՝ մերօրյա աղանդների ավերիչ գոյության պայմաններում: Գպրոցը, կրթական գործը պաշտամունքի են հասցված Վեհափառի առաջին գրադուրներում. Գետրոյան հոգեւոր ճեմարան, Մեսանի Վազգենյան դպրանոց, Հաղիմավանքի ընձայարան, «Էօրնեկեան» հանրակրթական դպրոց, հայրուրյաց բազում տներ են դեռ նոր բացվելիքներ...



Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդի 15-ամյա գահակալությունը հիմնալի առիթ է, որպեսզի անկեղծորեն արտահայտենք մեր երախտիրք՝ Հայոց Հայրապետի աստվածահանոն առաքելության հանդեպ: Վեհափառ Հայրապետն անգնահատելի ծառայություն է մատուցում Հայ Առաքելական Սբ Եկեղեցուն, որը նոր զարթոնք է ապրում ու աստիճանաբար վերականգնում է անցյալի կորցրածը՝ թե՛ ակրիտետով իր պատմության եւս մի նոր՝ փառավոր էջ: Անսահման երախտագիտությամբ ողջունում ենք Վեհափառ Հայրապետի գահակալության 15-րդ տարեդարձը: Ես այն միլիոնավոր հայերից մեկն եմ, ով ուզում է վերահաստատել իր որդիական սերն ու խոր ակնածանքը Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

Շնորհիվ Վեհափառ Հայրապետի ամենօրյա անդու աշխատանքի՝ այսօր Հայաստանը ու հայ ժողովուրդը հոգեւոր վերելք են ապրում: Հայ մարդը վերադարձել է իր ակունքներին, իր նախնիների հավատքին ու արժեքներին: Վեհափառ Հայրապետի ամենօրյա գործունեության հիմքը քրիստոնեական հավատքը, մեր դավանանքը աշխիքի լույսի պես պահպանելու մեջ է, իսկ հավատքն ու արժեքներն են:

Վեհափառ Հայրապետի գործունեության կարևորագույն կողմերից մեկը հոգեւորականների նոր սերնդի պատրաստումն է՝ սկսած հայրուրյաց տներէից, վերջացած Գետրոյան ճեմարանի ուսումնակրթական համալիրների վերափոխումներով՝ ժամանակակից պահանջների ոգով: Նորին Սրբության ամենօրյա հետևողական հոգատարության շնորհիվ է, որ տարեցուսարի գրանցվում է եկեղեցականների թվի աննախադեպ աճը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի պաշտոնակարման ընթացքում Հայ Առաքելական Եկեղեցու հոգեւոր վերածնունդը լիակատար նոր թափ ստացավ. ստեղծվում են նոր թեմեր, կառուցվում են տաճարներ, կատարվեցին գործընկերություններ և Աստվածաբանական կրթության համակարգը: Մեր Եկեղեցին այսօր ակնառու տեղ է գրադեցնում համաշխարհային քրիստոնեական համրության մեջ ու գործուն մասնակցություն ունենում միջկրոնական երկխոսությանը: Դրա վառ ապացույցը Վեհափառ Հայրապետի ընտրվելն էր Եկեղեցիների համաշխարհային խորհրդի նախագահի պաշտոնում, ինչն ուրախության ու հպարտության վեհ զգացում առաջ բերեց աշխարհակալուրդ ողջ հայ հանրության շրջանում: Այդ ընտրությունն Ամենայն Հայոց Հայրապետի կատարած աշխատանքի արգասաբեր տարիների արդյունքն է, որն ուղղված է քույր Եկեղեցիների ու կրոնական օտար կազմակերպությունների հետ մեր Եկեղեցու հարաբերությունների ընդլայնման ու համակարգման կարևոր գործին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության տարիները Մայր Աթոռ Սբ Էջմիածնի կյանքում շինարարական վերելքի նոր ժամանակաշրջան են: Նրա բահինաց արժեքավոր գործունեությունը նկատելի ներդրում է հայկական ժամանակակից ճարտարապետության մեջ: Այդ աշխատանքների մեջ իր ուրույն տեղն են գրադեցնում Մայր տաճարը ու նրա շրջակա տարածքը, Գետրոյան հոգեւոր ճեմարան-համալսարանը, նրա շրջակա տարածքը, Նոր Վեհարանի գոտին ու բազմաթիվ այլ վերակառուցումներ...

Այսօր Մայր Աթոռն իր հույակերտ նոր թովանդակությամբ դարձավ հոգեւոր հզոր կաճառ, որը նաև հայագիտության ու ուսումնական կենտրոն է:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության 15-ամյա տարեդարձի առիթով բող ամենակարող Աստված մրան պարգևի անկողում կանք ու անրեկանելի կորով, պահպանի երեւելի ու աներեւույթ փորձություններից՝ տարվ տրկար տարիների բազառադրություն՝ ի բարօրություն Հայ Առաքելական Սբ Եկեղեցու ու աշխարհակալուրդ հայության:

Վ. ԳՆԱԶԱՏԱՆ

33 ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամ

Վեհափառ Հայրապետը մեծապես վայելում է աշխարհով մեկ սիրված հայության վստահությունն ու աջակցությունը: Նա դարձել է մի անասան կամուրջ Սփյուռքի եւ հայրենիքի միջեւ. ապացույցը՝ այն բազմաթիվ նվիրատվություններն ու ձեռնարկները, որ իրականացվում են ինչպես Մայր Աթոռում, այնպես եւ բովանդակ Հայոց աշխարհում:

Վեհափառի անձնակազմը գործունեության շնորհիվ է, որ ազգային բազմաթիվ արժեքներ հայրենադարձվել են Մայր Աթոռ Սբ Էջմիածինը վերածելով մի ինքնատիպ մշակութային մայրաքաղաքի:

Մարդու ենք, որ Վեհափառ երկար-երկար տարիներ գահակալի, բանգի այնքան ծրագրեր ունի, որ պետք է կարողանա իրականացնել ինչպես ազգային, այնպես էլ հոգեւոր կյանքում ի բարօրություն մեր Սբ Եկեղեցու ու հավատավոր ժողովրդի:

Գետրոս ԳՈՎԱԶԱՆԻՍՅԱՆ
ԵԳԳ եւ Գետրոյան հոգեւոր ճեմարանի դասախոս, պրոֆեսոր

ՎԱՆԵՆՔ ԹԱՅՆ ՈՒ ՉՈՐԸ ՄԻԱՄԻՆ ԱՅՐԵԼՈՒ ՏԻՈՒԻ ԾՈՐՀԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ



Տիկազը՝ էջ 2
Հայաստանում եւ Սփյուռքի հայաշատ վայրերում վերջին 15 տարվա ընթացքում կառուցված ու նորոգված եկեղեցիների ընդհանուր քանակն այսօր անցնում է 300-ից: Պատմական ընդգրկուն փուլի հասնատությամբ այս կարճ ժամանակաշրջանում ընդլայնվեց նաեւ Մայր Աթոռի տարածքը՝ վեր պացող Նոր մուսուլկամարով ու Բաց Խորանով, կառուցվեցին Սկրտարանը, վանական ու վարչատնտեսական համալիրները, «Վաչե եւ Թամար Մանուկյան» գրադարան-գիտական կենտրոնը, շուտով ավար-



տին կհասնի Գարեգին Ա Հայրապետի անունը կրող կրթադաստիարակական կենտրոնի շենքը, բարեկարգվեցին ու ամրացվեցին հիմքերը Մայր Աթոռի տարածքում գտնվող բոլոր շինությունները, որոնք թվում էր խրոմյան Հայրիկի կառուցած, բայց իր կապտակին չծառայած թանգարանի շենքը. տրանս իրենց «վարչական տարածք» սակավումից զատ՝ նաեւ պատմամշակութային իսկական արժեքներ են: Նորոգվեցին Գայանե Եկեղեցու դարածքում գտնվող երկու շինությունները, որոնցից մեկում ապրում են կույսերը, մյուսը նախատեսված է



արանց որբանոցի համար: Այստեղ հարկ ենք համարում նրան այն կարևոր փաստը, որ Հայոց Հայրապետի նվիրական շաղկերով վերականգնվեցին ու բարեկարգվեցին խոնարհված ու վնասված միջնադարյան տասնյակ վանքեր ու եկեղեցիներ (ինչպես օրինակ՝ Նորավանքի, Կեչառիսի, Սաղմոսավանքի վանական համալիրները, Մուղու Սբ Գեւորգ, Սպիտակի Արջահովիտ գյուղի Սբ Գեորգ, Ծաղկածորի Կարմրավանք գյուղի Սբ Աստվածածին, Ավարանի Սբ Խաչ, Մարմաշենի, Տալիուշի Ոսկեան գյուղի Սբ Գայանե, Գուգարքի Մար-

գահովիտ գյուղի Սբ Գրիգոր Լուսավորիչ, Աշտարակի Կարմրավոր Սբ Աստվածածին եկեղեցիները, ու շատերն էլ Նորոգման ընթացքում են), որոնք մասին անստեղծակերտ կամ դրանց վրա աչք փակվողները սկսեցին մեղադրականներ հնչեցնել, թե Վեհափառն չեն հետաքրքրում հոգեւոր-պատմամշակութային հուշարձանները՝ չփորձելով անգամ ըմբռնել այն պարզ հրամայականը, որ այսօր դրանց պահպանումն ու վերականգնումը ծառայած են ոչ թե Եկեղեցու, այլ առաջին հերթին պետության առջեւ: Դրսից ներմուծված աղակների

հավազակալի ու հակապետական կամասակալի գործունեությունը կատեցնելու կամ անվավառ թուլացնելու միակ միջոցն առաջին հերթին բուն համայնքներում եկեղեցիներ, այն է՝ աղոթատեղիներ կառուցել է ու դրանցում ամենօրյա բահախաղաղործությունը: Եվ չնայած դրան՝ այսօր Հայաստանում կառուցված եկեղեցիներից շատերը, որոնք այսօր անհարկի բնակարաններ են, վստահաբար վաղը կհամարեն մեր ճարտարապետական, քանդակագործական ու շինարարական մտքի ու ձեռքերումների գանձարանը:

Շարունակությունը՝ էջ 4

Ալիզաբեթ էջ 3

Պարզապես ժամանակ է պետք, որ նաև աչքը սովորի նորին: Այդպես է եղել բոլոր ժամանակներում:

Այս ամենը ոգեկոչվեց, մարմին առավ նաև Հայ Եկեղեցու կիրառյալ գավակների աջակցությամբ, նրանց, ովքեր իրենց ներանձնական ու քաղաքական շա-

հղացումներ կյանքի են կոչվել ու կոչվում առավելապես բարեգործների ազնիվ պատրաստակամությամբ, նրանց՝ ներկան ապագայի մեջ տեսնելու վեհ կենդանի, ճշմարիտ ու անշահախնդիր հայրենասիրության ու աստվածամորության մեծ զգացումով:

Վեհափառ Հայրապետի հաջորդ՝ ամենակարևոր գործերից մեկն էլ հոգեւոր կարգերի պատ-

ամնիչական ջանքերով, բացվեց հոգեւոր-կրթական մի նոր հաստատություն, որը հետո Վազգեն Վեհափառի անունով կոչվեց Վազգենյան հոգեւոր դպրանոց: Դարանոցը տեղակայվեց դեռևս 1897-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Ա կրթմանի կողմից կառուցված մի հին շենքում՝ գուրկ կենցաղային բավարար պայմաններին:

Կայացման առաջին տարիները դժվարին էին, դժվարին՝ բոլոր առումներով, սակայն, շնորհիվ առաջնորդի անմիջական հոգատարության ու հաճախակի ներկայության, խնդիրները հետզհետե հաղթահարվեցին, ուսանողական՝ ինչ-որ տեղ ժուժկալ ու աշխարհիկ իմաստով ներամիտի կյանքը մտավ հունի մեջ և սովեց իր պտուղները: Առաջնորդ Գարեգին արք. Ներսիսյանի ե. երես-

պետի անմիջական ջանքերով, Հռոմի ճանապարհի կից բացվեց ես մեկ կրթական հաստատություն՝ Թրքահայկական ընծայարանը:

1874 թ. սեպտեմբերի 28-ին Գեւորգ Դ Կոստանդնուպոլսյեցի Կաթողիկոսի ջանքերով հիմնված 140-ամյա Գեւորգյան հոգեւոր ճեմարանը մինչև 1917 թ. բարձրագույն ուսումնական միակ հաստատությունն էր հայ իրականության մեջ, ուստի բնականաբար պետք է լինեց մեր հայրապետների իմաստի և գուրգուրանքի առարկան:


Մեծ է եղել այս հաստատության հանդեպ նաև մեր ժողովրդի սերը, այնքան մեծ, որ նրա բացումը վերաճել է ժողովրդական տոնախմբության: Ահա թե ինչ է գրում իր հուշերում ճեմարանի առաջին սաներից մեկը՝ հորեն (Համբարձում) ալ. քահա-

ճեմարանի նախկին դասախոսների ու սաների կիրառական աշխատանքները, որպեսզի յուրաքանչյուր հայի սիրտ լցվի ազգային արժանապատվության վեհ զգացումով: Մեծն Կոմիտաս, Կարապետ Մուրզա, Գարդգես Սուրենյանց, Երիշե Թադևոսյան, Մանուկ Աբեղյան, Հրաչյա Աճառյան, Կարապետ Տեր-Մկրտչյան, Գարեգին Հովսեփյան, Գարեգին Լեւոնյան, Հ. Հովհաննիսյան, Ս. Մանուկյան, Կ. Կոստանյան, Ա. Շահ-մուրադյան և մեծագործ այլ հայորիներ:

1917 թ. դեկտեմբերի 21-ին Գեւորգյան ճեմարանը փակվեց... և միայն տարիներ անց՝ 1949 թ., Գեւորգ 2 Չորեքյան Կաթողիկոսի մեծագույն ջանքերի զևով, ճեմարանը վերստին բացվեց՝ շարունակելու իր վսեմ առաքելությունը:



ՎԱՆԵՆՔ ԹԱՅՆ ՈՒ ՉՈՐԸ ՄԻԱՄԻՆ ԱՅՐԵԼՈՒ ՏԵՈՒԻ ԹՈՐՉԱՌՈՒԹՅՈՒՆԸ



հերից վեր կանգնեցին, նրանք, ովքեր տեսան Հայոց Հայրապետի աննկուն կամքն ու կիրքունը՝ Հայ Եկեղեցին դարին համընթաց տանելու առաքելությամբ, և մեծ պատրաստակամությամբ՝ սատարեցին՝ իրենց արդար քրտինքի մի մասը կիրառելով մայր Եկեղեցուն: Այս կիրառությունների շնորհիվ էր, որ իրականացան այն հսկայածավալ աշխատանքները, որոնք ակնատեսն են: Հայ ժողովրդի կյանքում ու Հայոց Եկեղեցում, ինչպես անցյալում, այնպես էլ այսօր, բազում ձեռնարկներ, ծրագրեր,

րաստումն էր: Կիստ կարեւորելով ուսյալ հոգեւորականների դերը Եկեղեցու առաջնային առաքելության մեջ՝ Նորին Սրբությունն անհրաժեշտ նկատեց հայ ժողովրդի պատմության մեջ իր հոգեւոր, գիտական և մշակութային անուրանալի դերակատարումն ունեցող Գեւորգյան հոգեւոր ճեմարանի կողքին հոգեւոր Նոր կրթարաններ հիմնելը ես:

Եվ ահա 1990 թ., երբ դեռ Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդն էր, Սեանս կղզու ստորոտում, նրա նախաձեռնությամբ և

կի բուհերից հրավիրված մասնագետների սիրո ու կիրքունի ջերմությունը կտորեց Սեանսի խստաշունչ օդն ու մթնոլորտը, և ստեղծվեցին բոլոր հիմքերը, որ այն կյանքի կոչվի ժամանակների համար, կյանքի կոչվի՝ որպես կայացած հոգեւոր ուսումնական հաստատություն: 2004 թ. Հայ Եկեղեցու ազնիվ բարերարներ տեր և տիկին՝ Գառնիկ և Անի Յակուբյանների միջոցներով բացվեց Վազգենյան դպրանոցի նոր՝ եռահարկ մասնաշենքը՝ հրաշալի հարմարություններով՝ այնտեղ սովորող ու բնակվող ուսանողների թե՛ ուսումնական և թե՛ կենցաղային պայմանների առումով: Դարանոցը նոր շունչ, նոր կյանք սովեց նաև Սեանսի թերապևտիկ Սբ Կարապետ եւ Սբ Առաքելոց եկեղեցիներին, որոնք տասնամյակներ շարունակ լքված ու մեմիկ էին: Նրանք այսօր կրկին իրենց նախկին կարեւորության ու փառքի մեջ են: Իսկ դպրանոցի սաներն արդեն արժանի հետնորդներն են սահալ-մեջբերային փառաշեղ հոգեբերումի, Սեանսում հիմնված վարդապետարանն ու բարձրագույն դպրոցի սրբազան ավանդներին: Իսկ 2011 թ., կրկին Վեհափառ Հայրա-



նա Ստամբուլյանը (1858-1927). «... ս. Պատարագից յետոյ եկեղեցական թափոքով, Վեհափառ հայրապետի գլխավորությամբ եկան ճեմարան, մաղթանք կատարեցին, ճանաչ արտասանեցին, շնորհատրություններ և ճաշկերոյթ, երեկոյան էլ հրավառություն տեղի ունեցաւ: Վանքի բակում, լճի ափին և գիւղամէջ լցած ուխտատուները ամեն կողմ դափ ու զուռնայով ուրախութիւն էին անում, եայլի երգում ու պարում կէսգիշերից անց...»: Բավական է թվարկել

Հետագայում Գեւորգյան կրթությանի հեղինակությունն ու վարկը մեծապես բարձրացան Վազգեն Ա եւ Գարեգին Ա մեր երջանակահիշատակ Կաթողիկոսների օրոք: Ստեղծվեցին պայմաններ՝ ուսանողների դասընթացն ու հանգիստը պատշաճ կազմակերպելու համար: Իսկ Գարեգին Ա Հայրապետի գահակալության տարիներին արդեն կառուցվեց ճեմարանի հանրակացարանի շենքը:

Շարունակություն էջ 8

ԳԻՐՔԸ՝ ԱՆԱՆՑ ԱՐԺԵՔ...

«Գրքեր չունենալը մտավոր աղքատության բարձրագույն աստիճանն է»: **Ռեհինգ**

Գիտական առաջընթացը, տեխնոլոգիական նվաճումները, ժամանակի նորագույն մարտահրավերները առաջադրել են բազմաթիվ և տարաբնույթ խնդիրներ... Փոխվել են արժեքափոխարկերը, մոտեցումները... Փոխվել է նաև հասարակության վերաբերմունքը գրքի նկատմամբ: Բազմադարյա գրքերին այսօր փոխարինում են էլեկտրոնային տարատեսակ կայքերը. գրեթե մոռացել ենք, որ գրքի միջոցով ենք դարձել նախորդ դարերի պատմության վերապրողը, հոգեւոր կյանքի ժառանգորդը, նախնիների փորձի ու գիտելիքների կրողը... Ի դեպ չէ սակավ. «Տպագրական դազգահը մտքի հրետանին է» (Իրվարո):

Գրքերը կյանքի, աշխարհի արտացոլանքն են, մարդկության




մեծագույն հարստությունը... Ա. Գրեյցեն իրավամբ նկատում է. «Անանց ընթերցանության չկա իսկական կրթություն, և չեն կարող լինել ո՛չ ճաշակ, ո՛չ ոճ, ո՛չ բազմակողմանի ըմբռնում... Ընթերցանությամբ մարդիկ վերապրում են դարեր»:

Հայ Եկեղեցին կ սկզբանե արժեւորել է գիրքը՝ այն համարելով բազմաշարքար ազգի պատմության խոսուն վկա, սերունդների դաստիարակ, հոգեւոր խավարում լույս պարզեող կանթեղ...

Խորհրդային կարգերի փլուզումից եւ անկախացումից հետո անհրաժեշտ էր առանձնակի ուշադրություն դարձնել հայ հոգեւոր մշակույթի ուսումնասիրմանը, նորովի արժեւորել եկեղեցական մատենագրությունը, փյունագրությունը, մանրակարգությունը, առավել մանրամասն ներկայացնել Հայ Եկեղեցու տոնախոսական, բարոյախրատական, սրբախոսական, մեկնողական հարստությունները:

Եկեղեցին այսօր եւս հավատարիմ է տպագիր գրքի հանդեպ իր ունեցած ավանական վերաբերմունքին. իրատարակական գրքեր գտնվում է Հայոց Հայրապետի հոգածության և ուշադրության կենտրոնում:

Մայր Վրոռի իրատարակական բաժինը նոր եռանդով ու հե-



տեղորակությամբ է շարունակում իր աշխատանքները՝ նպատակ հետապնդելով հասրության ուշադրությանը ներկայացնել հայագիտական կարեւորություն և գիտական արժեք ունեցող աշխատություններ:

Այս 15 տարվա՝ 1999-2014 թթ. ընթացքում լույս են տեսել

մեկնողական, դավանաբանական, հակաճանաչական, հայրաբանական, Հայ Եկեղեցու ծեսը ներկայացնող եւ մեկնաբանող գրեթե չորս հարյուր անուն գիրք, գրքույկ, տոնախոսական բարոյագրություն: Հիշատակենք Հայ Եկեղեցու հայրերի՝ Գրիգոր Նարեկացու («Մեկնություն Երգ երգոցի», գրք. թրգմ.՝ Վ. Ֆերեշեղյանի), Ներսես Շնորհալու («Մեկնություն Մատթեոսի Ավետարանի», գրք. թրգմ.՝ Սեդա Ստամբուլյանի), Հովհան Մանուկյան («Ճառեր», գրք. թրգմ.՝ Մարթա Արաբյանի), Հովհաննես Շորժորեցու («Մեկնություն Մատթեոսի Ավետարանի», պրակ Ա եւ Բ, գրք. թրգմ.՝ Սեդա Ստամբուլյանի) որոշ երկերի արժեքահայերեն թարգմանությունները, Կարապետ Եպիսկոպոս Տեր-Մկրտչյանի, Վազգեն Ա երջանակահիշատակ Հայրապետի երկերի ժողովածուների հրատարակությունը:

Շարունակություն էջ 8

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՍԵՆԱՅՆ ՂԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՎԻՆ ԱՆԳԱՍ....

Հայ Առաքելական Եկեղեցու լուսավորչափաստատ աթոռի 132 գահակալներից ոչ բոլորի գործունեության մասին խոսելիս կարելի է օգտագործել «առաջին անգամ» արտահայտությունը: Հետաքրքիր ու հիշարժան նախածնունդները քննելու կարող են իրականացնել: Այդ քննիչ է Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ասենայի Հայոց Կաթողիկոսը: Վեհափառ Հայրապետի գահակալության 15 տարվա գործերի պարզ թվարկումը ոչ մեկ անգամ է ուղեկցվում հենց այս արտահայտությամբ:

Արձանագրեց, ըստ ժամանակագրության, Հայ Եկեղեցու Գարեգին Բ Ասենայի Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ առաջին անգամ կատարված բարեփոխումները:

Մանուկների, նորաստվածների ու երիտասարդների օրհնության օրեր

Լորին Սրբություն Գարեգին Բ Ասենայի Հայոց Կաթողիկոսը, լինելով դեռևս Արարատյան

դուն» (Մատթ. ԻԿ 15): Այսօր արդեն, Գարեգին Բ Ասենայի Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ, այս տոները հռչակված են նաև որպես Լորապասկների, Երիտասարդների և Մանուկների օրհնության օրեր: Եվ պատահական չէ, որ Տյառնընդառաջի, Սբ Սարգսի և Ծաղկազարդի տոներին Եկեղեցիներն առավել աշխուժանում են իրենց օրհնությանը սպասող Լորապասկներով, Երիտասարդությամբ և մանուկներով:

«Շողակաթ» հեռուստաընկերությունը

Խորհրդային տարիների երազել կարելի էր Եկեղեցու մասին պատմող հեռուստատեսային որևէ սյուժեի, առավել ես՝ հաղորդման կամ ֆիլմի մասին: Լույս՝ Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդության տարիներին էր, որ արդեն անկախ Հայաստանում 1995 թ. Գարեգին արք. Ներսիսյանի նախաձեռնու-

Հայ Եկեղեցու դասնությունը դորոցներում

2002 թվականի օգոստոսի 22-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ասենայի Հայոց Կաթողիկոսը և ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը ստորագրեցին համաձայնագիր՝ Հայ Առաքելական Եկեղեցու և ՀՀ կառավարության միջև, որի համաձայն՝ 2003 թվականից Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներ առաջին անգամ մուտք գործեց լորի Հայ Եկեղեցու պատմություն առարկան: Լոր առարկայի մուտքն ընդգծում էր հայոց պետականության զարգացման և ամրապնդման գործում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու դերն ու նշանակությունը, կրթամշակութային կյանքում և ազգապահպանման գործում Եկեղեցու ունեցած բացառիկ առաքելությունը: Այսօր արդեն այս առարկան դասավանդվում է ոչ միայն Հայաստանի, այլ նաև՝ Լեռնային Ղարաբաղի դպրոցներում: Հայոց Եկեղեցու պատմություն առարկայի ուսուցումն սկսվում է տարրական դպրոցից և շարունակվում մինչև ավագ դպրոց:

Առևտրային խաչը՝ իբրև դասադաս Հայոց բանակին

Լորանկայի Հայաստանում Հայոց բանակի հետ Հայ Եկեղեցու համագործակցությունն սկսվում է 1997 թվականից: Սակայն 2000 թ. սեպտեմբերի 14-ին էր, երբ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում, Ասենայի Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի և այն ժամանակ ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի ներկայությամբ, Վեհաբանում Մայր Աթոռի և ՀՀ պաշտպանության նախարարության միջև ստորագրվեց Հոգեւոր ծառայության կանոնադրությունը: Փաստաթղթի վավերացմամբ հոգեւոր ծառայությունը ՀՀ պաշտպանության նախարարության բաղկացուցիչ մաս դարձավ, որի պատմությունն արդեն լի է հիշարժան տարեթվերով:

2011 թվականի սեպտեմբերի 16-ին ձեռամբ Ասենայի Հայոց Կաթողիկոսի կատարվեց ՀՀ Չինված ուժերի հոգեւոր առաջնորդության դրոշի օրհնության արարողությունը: «Օրհնալ է մեր ուղին, զի Աստված ընդ մեզ է՝ գրույթամբ ու Չինված ուժերի գինասնակով դրոշը, որի մյուս երեսին նուաքարերով ու մարգարիտներով զարդարված խաչի ատեղագործ պատկերն է, հանձնվեց ՀՀ ՉՈՒ հոգեւոր առաջնորդությանը: Այս դրոշով էր, որ Գարեգին Բ Ասենայի Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, առաջին անգամ լինելով, Հայոց բանակի հոգեւոր սպասավորները խորիտ քայլեցին Երեւանի Հանրապետության իրապարկով՝ իրենց մասնակցությունը բերելով Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյակի առ-



րում ունեցած հոգեւորականների ու աշխարհականների: Ավելի ուշ Ասենայի Հայոց Կաթոս Ա Կաթողիկոսի հայրապետական կոնդակներով սահմանվեցին նաև «Սբ Սահակ - Սբ Մեսրոպ» և «Սբ Ներսես Շնորհալի» պատվով շքանշանները:

2011 թվականին Ասենայի Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի տնօրինությամբ Եկեղեցական պարզեցման գնակը համալրվեց լորի՝ «Ասպետ Սուրբ Էջմիածնի» պատվավոր տիտղոսով ու շքանշանով, որը հայրապետական կոնդակով շնորհվում է հայրենիքին, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն և աշխարհասփյուռ հայ ժողովրդին մատուցած


թիվ կազմակերպված գործառնական:

Մեկ տարի անց՝ 2012 թվականի հունվարի 29-ին, Հայոց բանակի 20-ամյա հոբելյանի առթիվ, Հայոց բանակն առաջին անգամ ունեցավ իր պահապան խաչը: Վեհափառ Հայրապետը, օժեղով Մայր Աթոռում պահվող Աշոտ Երկաթ թագավորի պատմական սր խաչի կրկնօրինակը՝ Տիրոջ կենարար խաչափայտի մասունքով, հայրապետական սրբատառ կոնդակով այն հռչակեց իբրև Հայոց բանակի պահապան սրբազան խաչ և ի պահ հանձնեց ՀՀ պաշտպանության նախարարությանը և ՀՀ Չինված ուժերի հոգեւոր առաջնորդությանը:



բացառիկ ծառայությունների համար:

«Ասպետ Սուրբ Էջմիածնի» հայրապետական պարգևի առաջին տիտղոսակիրներն են դարձել ազգային և եկեղեցական բարերարներ տիկին Լուիզ Մանուկյան Սիմոն, Էդուարդ Էռնեսկյանը, Վաչե Մանուկյանը և Նազար Նազարյանը:



«Առաջին անգամ» արձանագրությամբ այս իրողությունների անպատճիվ թվարկումը, անշուշտ, Ասենայի Հայոց 132-րդ Կաթողիկոսի 15-ամյա անդադրում գործունեության ու մտահոգումների վկայությունն է, որ լի է լոր սպասավորներով:

Յեղիս ԿՎԻՏՅԱՆ



հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ, ժողովրդին սիրելի եկեղեցական մի քանի տոների լոր խորհուրդ հաղորդեց: Տյառնընդառաջի տոնին Եկեղեցիներում օրհնություն էին ստանում Լորապասկները, Երիտասարդների սիրելի Սբ Սարգսի տոնին՝ Երիտասարդները, իսկ Ծաղկազարդի օրը նաև մանուկների օրհնության օր էր, քանզի Տիրոջ՝ Երուսաղեմի տաճար մտնելու ժամանակ մանուկներն էին արգազակում՝ ասելով. «Օրհնություն՝ նախորդ

ությամբ առաջնորդարանում հիմնվեց թեմի ստուգիան: Այն հետագայում վերածելու էր հոգեւոր-մշակութային մի լուրջ և ազդեցիկ հեռուստաընկերության, որի հիմնադիրն առաջին անգամ լինելու էր Հայ Առաքելական Եկեղեցին: Այսօր արդեն «Շողակաթը», բազմաժանր ու հետաքրքիր իր հաղորդումներով, Եթերային կարելու տեղ ունի քրիստոնեական ու մշակութային արժեքների քարոզչության ու լուսաբանման գործում:





ՎԵՀԱՓԱՌ

Մեղերնով բեռնավորված աշխարհը Նա կարող է նորոգել միայն մեկ խոսքով՝ տեսնելով գոշումը, վերափոխվելու ցանկությունն ու ջանքը մարդկային հոգիների: Նա գիտի մարդկանց սրտերը, նրանց խորհուրդները, գիտի բոլոր գործերի նպատակներն ու պիտի շնորհի յուրաքանչյուրին առ Աստված ունեցած հավատի և հույսի համեմատ:

Յուրաքանչյուր որ իր ծառայության վայրում, իր գործունեության մեջ պիտի ընթանա Աստծո փրկարար կամքով և հայրենյաց սիրո աստվածահաճո ճանապարհով, որ բարի ազգայիններ է բերում մեր կյանքին և մեզ սիրելի դարձնում Տիրոջը, բանգի ինչպես հարուցյալ Քրիստոսին առաքյալ ճանաչեց ողջ մարդկության համար կրած չարչարանքների նշաններով, նույնպես Քրիստոսը ճանաչում է մեզ՝ Իր հետեւորդներին, հավատքի վկայություններով, հրաժարումով այն ամենից, ինչ հակառակ է աստվածային կամքին՝ բարուն, արդարությանն ու ճշմարտությանը:

Մենք համոզված ենք, որ անհնար է աշխարհիկ հարցերի լիարժեք վճռումը, երբ պետությունն ու նրա ծառայողները բաժանված են կրոնական այն հիմքից, որը ձեռնադրել է հոգևոր աշխարհի և նկարագիրը ժողովրդի, ում կյանքի ուղին նրանք կոչված են որոշելու և ում ձգտումները նրանք պետք է իրագործեն:

Աստծո և միմյանց հանդեպ սերն է, որ խաղաղություն և համերաշխություն պիտի բերի բազում տագնապներով ապրող այս աշխարհին, բացառի մարդկանց, ազգերի իրավունքների ոտնահարումը, նրանց սրբությունների և հոգևոր արժեքների կործանումը: Այդպիսի սիրով պիտի հաղթահարվեն չքավորությունը, հիվանդությունները, աղետների պատճառած հոգսերն ու վնասները: Այդպիսի սիրո լույսով աշխարհը պիտի նորոգվի, երկիրը երկինք դառնա, մարդկային կյանքով Աստված փառաբանվի:

Աստված կազմեց և օրհնեց ընտանիքը, որ այն հաստատված մնա, աճի և բազմանա սիրո մեջ և արտաջրի Աստծո փառքը, Աստծո ներկայությունը և Աստծո խնամքը արարչության և բոլոր մարդկանց հանդեպ: Ընտանիքը կոչված է շարունակելու Աստծո արարչագործությունը և պաշտպանելու մարդկային հոգու աստվածապատկեր նկարագիրը: Իր այս կոչումով ընտանիքը սուրբ է, սնուցողը, կրոնն ու փոխանցողը աստվածադիր պատվիրանների, որոնց վրա հաստատվում է կյանքը տերունապարգե, և կառուցվում են հարաբերությունները դեպի մերձավորը, առ մարդը և առ Աստված: Ընտանիքներում սերմանվող արժեքներն են, որ դրսևորվում և տեղ են գտնում կյանքի մեջ: Ինչը կարևորվի ընտանիքներում, կուսուցանվի ուղղակի կամ անուղղակի միջոցներով՝ ազնվությունն թե կեղծիք, նախանձ թե բարի կամեցողություն, ատելություն թե գրասրտություն, շարախնդրություն, արհամարհանք թե կարեկցություն ու մարդասիրություն, ամենը կարտահայտվի նաև հասարակական կյանքում:

Ազ ու պետություն համայնքված՝ ջանքեր պիտի գործադրենք հարթանակի առաջնորդելու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարցի խաղաղ կարգավորումը՝ Արցախի մեր ժողովրդի ազատ ապրելու իրավունքի ճանաչումով: Մեր պատմության և սե-

րունդների առջև պատասխանատվությամբ ջանքեր պիտի գործադրենք նաև հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացներում: Կառադրությունն ու համագործակցությունը եղել ու մնում են սկզբունքային արժեքներ մեր ժողովրդի համար, որոնց ուղղությամբ քայլեր ձեռնարկելով՝ հաստատում պիտի մնանք մեր իրավունքների պաշտպանության դիրքերում: Մեր գերագույն նպատակը Հայրենիքի և մեր Եկեղեցու, հոգևոր և ազգային մեր կյանքի, մեր հավատքի պայծառությունն է, որ ամեն ժամ վկայվի գործերով, սիրով ու արդարությամբ միմյանց հանդեպ:

Տիրոջը փնտրել նշանակում է ընթանալ դեպի Աստված, ընդունել Նրա փրկարար կամքը, հետեւել Նրան: Տիրոջը փնտրել նշանակում է հանդիպել, տեսնել Նրան մարդկանց կերակրելիս, բժշկելիս, մխիթարելիս, հույս, հավատ ու կյանք պարգևելիս, կեղծիք ու երեսպաշտությունը սաստեղիս, մարդկանց խաղաղության, արդարության, ճշմարտության ուղիով առաջնորդելիս:

ՀԱՅՐԱՊԵՏԻ

Ամուր պահենք հայ ինքնությունը, որն արտահայտվում է ոչ միայն ազգային պատկանելությամբ, այլև Հայրենիքի հանդեպ նվիրումով, մեր նախնյաց ժառանգության արժեքներով, մեր ժողովրդի նկարագրի անբաժանելի մասը դարձած բրիտանական արժեքների հանդեպ հավատարմությամբ ու նախանձախնդրությամբ:

Մեր օրերում, նաև մեր կյանքում հավատաշեն գործերի, աստվածահաճո բազում ձեռնարկների կողքին ցավով կարելի է տեսնել աստվածամերժ ընթացքներ, մեր ժողովրդի բրիտանական նկարագրին անհարիր բարքեր, ազգային նվիրական արժեքնաձև կարգի խաթարում, նաև՝ հոգևոր աճուստումով նյութականի, դրամի գերարժեւորում, որը դառնում է գլխավոր նպատակ՝ փոխանակ լինելու կյանքի արդար ու բարի ընթացքը կազմակերպելու միջոց: Նման դրսևորումները, հաստատապես, պարպում են կյանքը Քրիստոսի կենարար ներկայությունից, գրկում այն հոգևոր ուրախությունից, գրասրտությունից, մարդասիրությունից, ազնիվ ու վեհ զգացմունքներից, տերունաշնորհ փրկությունից:

Հգոր ու ծաղկուն Հայրենիքը հույսն ու երաշխիքն է մեր լուսավոր գաղիքի, ապահովությունը, բարգավաճումն ու բազմապատկումը մեր ընտանիքների, գրավակաճող հայրենադարձության, գորեղ կովանք հայապահպանության, որ Սփյուռքում ապրող հայության սերունդները հարազատության ամուր կապով կապված լինեն Մայր Հայրենիքին և մասնակից՝ հայրենական կյանքին:

Մեր պատմության նոր այգաբացն է՝ լեցուն մեր անկախացյալ երկրի և ազգային կյանքի գարթոնքի հույսերով: Մեր հայրենի այս տեսիլքով վերապրեցին առավել ղեկավար ու բարդ ժամանակներ, համբերեցին ծանր փորձությունների, տոկացին հալածանքների ու նեղությունների մեջ, աքնցին ու ստեղծեցին արդար վաստակով և Հայրենիքի համար ելան անհավասար մարտերի: Պարտք ունենք մեր հայրերի և սերունդների առջև՝ շենացնելու մեր երկիրը, մարմնավորելու ազգային մեր իղձերը:

Մենք կարող ենք ունենալ քաղաքական ու տնտեսական հեռանկարները, ազգն ու երկիրը շենագնելու տարբեր ծրագրեր ու ակնկալիքներ, դրանց իրագործման տարբեր ուղիներ, սակայն արդարությունը, օրինահարգությունը, միմյանց հանդեպ հարգանքը, համերաշխությունը, հասկացողությունը ոգին բոլոր պարագաներում, նաև՝ ընտրական գործընթացում, կենսական պահանջ են՝ միավորվելու համար մեր նպատակների շուրջ եւ վկայելու կյանքը վերափոխելու մեր ձգտումն ու կամքը: Այսպիսի ընթացքով, հոգևոր-բարոյական արժեքներն ու սկզբունքները կյանք դարձնելով՝ միշտ պիտի ունենանք առաքյալի բերած քաջալերությունը, որ Աստված, Ով հարություն տվեց մեր Տիրոջը, մեր կյանքն էլ պիտի օրինի հարությանը ու զարթոնքով:

Պատվական պարզելը Փրկչի համար քրիստոնյան ինքն է, ով մարդու սրտով ընդունել է «Աստված մեզ հետ է» մարգարեարբան ավետիսը եւ ջանում է կյանքի ամեն մի օրն ապրել աստվածային կամքի համաձայն, լի առ Աստված հավատքով, այլոց հանդեպ սիրով, Փրկչի հետ հոգևոր նոդոգությունը: Փրկչի շնորհներով վերածնված մարդը վերափոխվում է կյանքը՝ այն առաջնորդելով միշտ դեպի բարին, ավելի լավ ու կատարյալը: Տիրոջ ներկայության եւ Նրա ողորմության անսովոր շողերի առջև, ինչպես ասում է սբ Գրիգոր Նարեկացին, հաշտում են մեղքերը, ողջանում են վերքերը, վերանում են ապակամությունները, նահանջում են տխրություններն ու հեծությունները, փախչում է խավարը, եւ տիրում է ամենախնամ բազմփորությունը Բարերար Աստծո:

ԽՈՍՔԵՐԻՑ

Ունեւորն ապրում է անհնգատության մեջ, չունեւորը՝ նեղսրտության, ընդհանուր հասարակությունը՝ օտարացման: Հանուն նյութականի են մարդիկ հնարներ փնտրում կողոպտելու, գրկելու, նվաստացնելու: Հանուն նյութականի են օրենքներ խախտում, պաշտոն չարաշահում, իրավունք ոտնահարում, միմյանց կործանում: Հանուն նյութականի, ավաղ, երբեմն նաև՝ Աստծո անունով՝ ընդդեմ Աստծո: Այն, ինչ ծնունդ է առնում հանուն Աստծո, բարիք է մարդկանց համար, մխիթարություն ու խնդրություն: Աստծո հետ մարդու համար գործում են կյանքի այլ չափանիշներ, գոյության իմաստի այլ սկզբունքներ ու արժեքներ:

Մեր պատմությունն իսկ վկայում է, որ Փրկչին հավատարմությանը է մեր ժողովուրդը կերտել իր ստեղծագործ կյանքի հաղթանակները եւ մշակույթի վերելքները: Մեր Տիրոջ հետ ենք դիմակայել փորձություններին, վեր հանել պակերներից, վերապրել ցեղասպանություն: Մեր Տիրոջ գործությանը Սփյուռքում վերընձայտվել ենք ու պահպանել մեր ինքնությունը, աշխարհաստիճան միասնականությանը վերահաստատել մեր ազատ պետականությունը, մշտապես վառ պահել տեւիքը մեր ավետյաց երկրի, այլև՝ հավատը, որ Տերը համախմբելու է մեզ մեր Հայրենիքում:

Մարդկային կյանքի հիմքում Քրիստոսը դրեց սերը, որպեսզի կատարյալ լինի մարդը, եւ ոչինչ չպակասի մարդուն: Մեր ստեղծում է, կերտում ու հաստատում է ոչ՝ կործանում. լուսավորում է, հուսադրում, խինդ ու երանություն է պարգևատմում եւ ոչ՝ անորոշության ու վիստայության մատնում, վիշտ ու տրտմություն բերում: Մեր բարիքի ու երջանկության

արդյունք է, վե՛սն է խաղաղության ու արդարության, քաջալերությունը՝ միմյանց աջակցության ու գորակցության՝ հանուն մարդկության բարոր, միշտ զարգացող առաջընթաց կյանքի:

Երբ մարդկային խոհերն ու գործերը ծնունդ են առնում եւ առաջնորդվում Աստծո հանդեպ հավատքով ու միմյանց հանդեպ սիրով, դա Քրիստոսի մեջ եղող կյանքն է: Երբ խնամքն ու աջակցությունը հասարակության նկարագիրն ու բնական վիճակն են, դա Քրիստոսի մեջ եղող կյանքն է, երբ 30 արձաբով չեն հարբվում հուղայական կեղծիքի ու մատնության ուղիները եւ պիղատոսյան անտարբերությամբ անարդարություններ չեն իրագործվում, դա այն կյանքն է, որ Քրիստոսի մեջ է, երբ նեղության թե լիության մեջ աղոթքը եւ առ Աստված փառաբանությունն են մարդկանց շուրթերին, ու ընտանիքներում հասակ են առնում բարեպաշտ զավակներ՝ դա այն կյանքն է, որ Քրիստոսի մեջ է, եւ որին Աստծո բարեխնամ շնորհով կանչված է մարդկությունը:

Չարը դադար չունի, գործում է օրնիքում եւ գործում է մարդկանց միջոցով: Չարը ճանապարհ է հարթում, երբ կյանքում պակասում է նախանձախնդրությունը՝ ճշմարտության հանդեպ, եւ սուտը գտնում է իր համակիրներին: Չարի խաբեպատիր ընթացքները գորանում են, երբ մարդը հեռանում է Քրիստոսի ուսուցանած սկզբունքներից՝ կյանքը լցնելով կեղծիքներով ու խեղաթյուրումներով: Այսպես է, որ իրողությունների ներկայացումը ձեւափոխվում է բանասրկության եւ անճիշտ գնահատականների, կրոնի ընկալման մեջ կամայական ու շահախնդիր մեկնաբանությունները ծնունդ են տալիս աղանդների, մարդու իրավունքի պաշտպանության պահանջով պարտադրվում են երբեմն նաև հասարակության մտածելակերպին ու արժեհանակարգին անհարիր բարքեր: Այսպես է, որ աշխարհում բարոյականությունը տեղի է տալիս ապարդայականության առջև. խոսքի ազատությունը վերածվում է խոսքի սանձարձակության, վկայությունը՝ ճշմարտության խեղումի:

